

## **Գեղաշենում 140 փոքրիկների համար նախատեսված մանկապարտեզի կառուցման աշխատանքները մեկնարկեցին 08.11.2019**

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն այսօր Գեղաշեն նախալեռնային համայնքում մասնակցել է մանկապարտեզի շենքի հիմնարկեքի և օժման արարողությանը:

Մանկապարտեզի կառուցումը հնարավոր է դարձել տարածքային կառավարում-տեղական ինքնակառավարում- մասնավոր հատված եռակողմ համագործակցության արդյունքում:

Ծրագրի արժեքը 125.400 000 դրամ է, որից 62. 700.000 դրամը (50%) կառավարության սուբվենցիոն ծրագրի շրջանակում պետական բյուջեի ֆինանսավորման չափն է, իսկ 62. 700.000 դրամը (50%) համայնք-մասնավոր հատված ներդրման չափը:

Նշենք, որ շուտով շուրջ 4350 բնակիչ ունեցող այս՝արագ տեմպերով զարգացող համայնքը կունենա հրաշալի մանկապարտեզ՝ նախատեսված շուրջ 140 երեխայի համար:

«Զկա ավելի ուրախալի ու միմյանց շնորհավորելու լավ առիթ, ինչպիսին համայնքում մանկապարտեզի կառուցումն է, որովհետև մանկապարտեզը համայնքի բարեկեցության կարևորագույն չափանիշներից է»,-դիմելով ներկաներին՝ ասել է մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը:

Մանկապարտեզի շենքի հիմնարկեքի, օժման արարողության և տոնական միջոցառումից հետո մարզպետն այցելել է նաև համայնքի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց:

Դպրոցն իր միջոցներով կառուցել է հրաշալի խաղահրապարակ, իսկ առաջիկայում ետևաբակում նախատեսված է կառուցել նաև ընդարձակ մարզահրապարակ՝ վոլեյբոլի առանձնացված խաղահրապարակով:

Մարզպետը պատրաստակամություն է հայտնել աջակցելու նախաձեռնությանը՝ օր առաջ աշխատանքները մեկնարկելու համար:

Նա շրջել է նաև դպրոցի ճաշարանով, որտեղ գործում է ՄԱԿ-ի Պարենի Զամաշխարհային ծրագրի շրջանակում իրականացվող «Դպրոցական տաք սնունդ» ծրագիրը, ծանոթացել ճաշարանի պայմաններին, որոնք բարելավվելու կարիք ունեն: Մարզպետն ընդգծել է, որ սա նույնպես կներառվի մարզային կրթական հաստատությունների զարգացման առաջիկա գործողությունների պլանում:

Հիշեցնենք, որ Գեղաշենում սուբվենցիոն մեկ այլ ծրագրի շրջանակում կառուցվել է նաև խմելու ջրի 2 ջրագիծ՝ 3.890.000 և 12.499.980 դրամ արժողությամբ: